# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Աղավնատուն համայնք, ՀՀ, Արմավիրի
մարզ, գ.Աղավնատուն, Ն.Մաթևոսյան պող. 25, Հեռ.
(0231)60075 , aghavnatun.armavir@mta.gov.am

N Ա-156
*20 սեպտեմբեր 2017թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 8 հերթական նիստի որոշումները:
Առդիր 28 էջ:

Հարգանքով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գնել Մաթևոսյան**

*Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Զոհրաբյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 47-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 8 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ
7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15
գ.Աղավնատուն

ՀԱՎԵԼՎԱԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**2017ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ <<15>>-Ի**
**N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ**

# ՕՐԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի «ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

6.ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

7. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

8. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

9. ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

10. ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

11. ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

12. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 48-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի «ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Աղավնատուն համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի«Աղավնատուն համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 70-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1)Որոշման 3-րդ կետի հատված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ
2)Որոշման 4-րդ կետի հատված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ
3)Որոշման 7-րդ կետի հատված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15
գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 49-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 36-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ՎԻՎ օրենքի 156-րդ հոդվածի առաջին մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Սահմանել Աղավնատուն համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման կարգը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15
գ.Աղավնատուն

Հավելված
Աղավնատուն համայնքի ավագանու
2017թվականի սեպտեմբերի 15-իթիվ 49-Ն
որոշման

# ԿԱՐԳ

## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ' Կարգ) սահմանվում է Աղավնատուն Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի' իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ' պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը' միջոցառումների համալիր է, որնուղղված է Աղավնատուն համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են' շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Աղավնատուն համայնքի վարչական տարածքում գտնվող'

1) շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ' օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ'օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են'

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու սպասարկումը.

3) անհրաժեշտ լուսավորություն անշարժ գույքի մուտքի համար.

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8.Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ ( աշխատանքները.

1) շենքի ճակատին նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի Փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Աղավնատան համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է համայնքապետարանի կողմից:

10. Աղավնատան համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելու ժամկետները:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահոված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբամանների առկայությունը.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղադրել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12. համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցվում է համայնքապետարանի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավմամբ:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունք ում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

16. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների,

ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև փողոցի երթևկելի մասի եզրաքարը.

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծից մինչև փողոցի երթևկելի մասի եզրաքարը.

4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից մինչև փողոցի երթևկելի մաս իեզրաքարը,

5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

7) Առանձին դեպքերի համար կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համաձայնեցնելով դրանք համայնքապետարանի հետ:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Զոհրաբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 50-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի իրավաբանական անձանց աղբահանության դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15
գ.Աղավնատուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ավագանու
2017թ, սեպտեմբերի 15-ի թիվ 50-Ն
որոշման

| ՀՀ մարզի Աղավնատուն համայնքի իրավաբանական անձանց աղբահանության սակագներ | |
|---|---|
| | |
| Գործառույթային նշանակությունը | դրամ/1 քառ.մ |
| Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ | 25 |
| արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ | 5 |
| կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ | 3 |

Աշխատակազմի քարտուղար Վ,Զոհրաբյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 51-Ա

### ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հաշվի առնելով համայնքի ղեկավար Գնել Մաթևոսյանի կատարած բարեխիղճ աշխատանքը թույլատրել վճարելու միանվագ դրամական պարգևատրում իր պաշտոնային դրույքի չափով՝ 260.0 հազար (երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ
7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15
գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 52-Ա

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից 100.0 հազար (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ ծախսելու տարեցների միջազգային օրվա կապակցությամբ միջոցառում կազմակերպելու նպատակով:

2.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից 300.0 հազար (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ ծախսելու Աղավնատուն համայնքի «Կրթություն եվ մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակիցների և Աղավնատան համայնքապետարանի աշխատակազմի հանգստի կազմակերպման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15

գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 53-Ա

### ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Առաջարկել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից 550.0հազար(հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հատկացնելու 2017-2018թթ ուսումնական տարում Աղավնատան միջնակարգ դպրոց հաճախող 1-ին դասարանցիներին և նախակրթարանի երկու խմբերի երեխաներին «Գիտելիքի օրվա» կապակցությամբ,պայուսակներ և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով:
2.Առաջարկել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից 100.0 հազար(մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնելու տարեցների միջազգային տոնի կապակցությամբ համայնքի տարեցներին նվերներ ձեռք բերելու նպատակով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2017թ սեպտեմբերի 15

գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 54-Ա

### ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով , 31-01-2015թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության N105-Ն որոշման 25-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով կատարել գնում՝ ձեռք բերել էլեկտրական հենասյուներ և շինանյութեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ
7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2017թ սեպտեմբերի 15

գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 55-Ա

## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի երրորդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել 2017 թվականի Աղավնատան համայնքապետարանի կողմից ձեռք բերած 3 հատ հոսանքի կայունացուցիչներ և 1 հատ օդակարգավորիչը գույքագրման ցուցակներում ներառելու հետևանքով կատարած փոփոխությունները:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ
6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ
7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15
գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 56-Ա

## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի առաջին մասի 1.2 կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Աղավնատուն համայնքի սրբավայրերը անհատույց հանձնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին.
1) Սբ.«Կարմրավոր» 17-18-րդ դար- 672 քմ,
2) Սբ. «Աստվածածին» եկեղեցի 1829թ կառուցված- 636 քմ,
3) Սբ. «Կարապետ» 17-18-րդ դար 15 քմ,
4) Սբ. «Աստվածածին» ամրոց- 10-19-րդ դար -335 քմ,
5) Սբ. «Ծիրանավոր» 10-14-րդ դար -384 քմ :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15

գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 57-Ա

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ և 15-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Աղավանատան միջնակարգ դպրոցին կից նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեությունը իրականացնելու նպատակով, խմբի պահպանման ծախսերը կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին, նպատակային հատկացման (դրմաշնորհ) տեսքով՝ 3100.0 հազար(երեք միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:
2.Մանկավարժ դաստիարակի պաշտոնային դրույք սահմանել 103.5 հազար (մեկ հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3.Դայակի պաշտոնային դրույք սահմանել 74.074հազար(յոթանասունչորս հազար յոթանասունչորս ) ՀՀ դրամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2017թ սեպտեմբերի 15

գ.Աղավնատուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Աղավնատուն, (0231)60075, aghavnatun.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 58-Ա

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Հիմք ընդունելով սոցիալական հարցերի հանձնաժողովի դրական եզրակացությունը, թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից Աղավնատուն համայնքի բնակիչ Մարինե Գրիգորյանին տալ դրամական օգնություն 30.0 հազար (երսուն հազար) ՀՀ դրամ::
2.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն նորածինների մայրերին 250.0 հազար(երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն մահացածի հարազատին՝ Հովսեփ Հովհաննիսյանին 25.0 հազար ( քսանհինգ հազար) ՀՀ դրամ:
4.Թույլատրել համայնքի ղեկավարին, համայնքի բյուջեից տալ դրամական օգնություն Հայոց բանակում ծառայող զինծառայողների ծնողներին իրենց զավակներին տեսակցելու նպատակով 180.0հազար (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ համաձայն հավելված 2-ի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ՆՇԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ
3. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

4. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

5. ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԻՍԱ

6. ՍՈՒՄԲԱՏՅԱՆ ՍԻՐՈՒՆ

7. ՎԻՐԱԲՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՆԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2017թ սեպտեմբերի 15

գ.Աղավնատուն

Հավելված1
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ավագանու
2017 թվականի սեպտեմբերի 15-ի
թիվ 8 հերթական նիստի N 58-Ա որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Համբարձումյան Կարինե | 25000 |
| 2 | Վիրաբյան Անի | 25000 |
| 3 | Խաչատրյան Հասմիկ | 25000 |
| 4 | Աբգարյան Հասմիկ | 25000 |
| 5 | Ալեքսանյան Արևիկ | 25000 |
| 6 | Համբարձումյան Լիլյա | 25000 |
| 7 | Նիկողոսյան Արմենուհի | 25000 |
| 8 | Ալեքսանյան Անահիտ | 25000 |
| 9 | Հարությունյան Վարդանուշ | 25000 |
| 10 | Անդրեասյան Հասմիկ | 25000 |
| | Ընդամենը | 250000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Ջուհրաբյան

Հավելված2
ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ավագանու
2017 թվականի սեպտեմբերի 15-ի
թիվ 8 հերթական նիստի N 58-Ա որոշման

ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

| ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ | | |
|---|---|---|
| | Ազգանուն Անուն | Ստացվող գումար (դրամ) |
| 1 | Արտաշեսյան Կարո | 10000 |
| 2 | Խաչատրյան Ալինա | 10000 |
| 3 | Հակոբյան Լուսինե | 10000 |
| 4 | Հայրապետյան Մարատ | 10000 |
| 5 | Միքայելյան Ռոբերդ | 10000 |
| 6 | Միսակյան Հովհաննես | 10000 |
| 7 | Շմավոնյան Շմավոն | 10000 |
| 8 | Վիրաբյան Խաչիկ | 10000 |
| 9 | Հակոբյան Մարատ | 10000 |
| 10 | Այիբյան Անդրանիկ | 10000 |
| 11 | Հովհաննիսյան Հովսեփ | 10000 |
| 12 | Խաչատրյան Գարուշ | 10000 |
| 13 | Առաքելյան Գևորգ | 10000 |
| 14 | Սահակյան Վարդան | 10000 |
| 15 | Սմբատյան Յուրիկ | 10000 |
| 16 | Գալստյան Մարգպետունի | 10000 |
| 17 | Գրիգորյան Ջանիբեկ | 10000 |
| 18 | Գասպարյան Նունուշ | 10000 |
| | Ընդամենը | 180000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ.Զոհրաբյան